Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(10 հունիսի, 2011 թ.)

«Երանի ժողովրդեան, որ գիտեն զօրհնութիւնս քո Տէր,
ի լոյս երեսաց քոց գնասցեն եւ յանուն քո ցնծասցեն զօրհանապազ,
եւ յարդարութեան քում բարձր եղիցին»:
(Սաղմ. ՁԸ 16-17)

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Ուրախ է Մեր հոգին, որ առիթն ունենք վերստին այցելելու քրիստոնեական սուրբ վկայություններով ու ազգային ավանդություններով հարուստ Ձեր պատմական երկիր՝ հանդիպելու Ձերդ Սրբությանը եւ հաղորդ դառնալու Վրաց Ուղղափառ Եկեղեցու լուսավոր, նոր ձեռքբերումներին, ինչպես նաեւ՝ Հովվապետական նվիրական այց կատարելու վիրահայ համայնքին եւ օրհնելու աստվածասեր մեր ժողովրդին ու նրա ջանքերը, որոնք նոր վկայություններով ամրացնում են մեր ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Արդարեւ, բազում են այն հոգեւոր, մշակութային եւ պատմական կապերը, որոնք միավորում են մեր ժողովուրդներին՝ հակառակ պատմական զարգացումների արդյունքում մեր Եկեղեցիների միջեւ ի հայտ եկած դավանաբանական տարբերությունների: Հնագույն ժամանակներից մեր նախնիք ապրել ու արարել են կողք կողքի, խաղաղության եւ ազատության նույն հույսերն ունեցել, միմյանց աջակցել, միասնաբար պաշտպանել հայրենի տունը եւ քրիստոնեական սուրբ հավատքը: Առ Աստված ապավինությամբ, ամուր եւ աներկբա հավատքով մեր ժողովուրդները դիմակայեցին նաեւ խորհրդային եկեղեցահալած ժամանակներին եւ այսօր վերահաստատել ու կառուցում են իրենց անկախ պետականությունը եւ պայծառացնում իրենց հոգեւոր կյանքը, որպեսզի, ինչպես սաղմոսերգուն է ասում, Տիրոջ օրհնությունը ճանաչող ժողովուրդը միշտ Նրա երեսի լույսով ընթանա, Նրա անվամբ ցնծա եւ Նրա արդարությամբ բարձրանա:

Ուրախություն է Մեզ համար տեսնել այն հոգեւոր զարթոնքն ու առաջընթաց կյանքը, որ ապրում է Վրաստանը, եւ որին, ինչպես դարեր շարունակ, իր մասնակցությունն է բերում Վրաստանի հայ համայնքը: Հոգեւոր եւ ազգային կյանքի զարգացման նույն հույսերն ունենալով եւ ջանքեր ներդնելով, դժբախտաբար Մեր Եկեղեցին Վրաստանում շարունակում է կրել իր առաքելությանը խոչընդոտող դժվարություններ: Վիրահայոց թեմի վերջին քսան տարիների ցավալի կորուստներին անդրադարձ չկատարելով, լավատես՝ Վրաստանի նախագահի եւ Ձեզ հետ հանդիպումից, կուզենայինք արտահայտել Մեր հավատը, որ նաեւ Ձերդ Սրբության զորակցությամբ վճիռներ պիտի գտնեն թեմին իրավաբանական կարգավիճակ տալու եւ հայկական եկեղեցիները վերադարձնելու խնդիրները՝ ի նպաստ Վրաստանի հայ համայնքի հոգեւոր կյանքի պայծառության եւ ի վկայություն մեր եկեղեցիների ու ժողովուրդների եղբայրության:

Ձերդ Սրբություն, մեր հանդիպման առիթով նվիրում ենք Ձեզ առաքելապատիվ Սուրբ

Նունեի սրբապատկերը: Այն, դեգերումների երկար ճանապարհ անցնելով, հասել է մեզ, եւ իր վրա կրող հետքերով հիշեցնում է եկեղեցիների ավերվելու, կողոպտվելու, անխնամ մնալու ժամանակների մասին: Թող սրբուհու բազմաչարչար նկարը վկան լինի մեր ժողովուրդների հավատաշեն նոր ժամանակների:

Սուրբ Նունեի եւ մեր Եկեղեցիների համար նույնքան հարազատ մյուս սրբուհու՝ Սուրբ Շուշանիկի բարեխոսությունների հայցով աղոթում ենք առ Բարձրյալը, որ քաջառողջություն պարգեւի Զերդ Սրբությանը, երկար տարիների գահակալություն եւ նոր ձեռքբերումներ ու մնայուն գործեր՝ ի սեր Վրասպանի, Վրաց Ուղղափառ Եկեղեցու եւ ասպվածասեր ժողովրդի: